Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

373 ՆԵՐՍ. ԴՊ
Ն-63
20996

# ՆԵՐՍԻՍԵԱՆ

## ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

## 1899–1900

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՑ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

370
Հ401-Տե

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէ եւ Ընկ., Նիկ. 21.
1901

# ՆԵՐՍԻՍԵԱՆ

## ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

## 1899–1900

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՑ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Թիֆլիս
Տպարան Մ. Շարաձէ եւ Ընկ., Նիկ. 21.
1901

РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ «МШАКЪ» ТИФЛИСЪ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922
2010
2002

Дозволено Цензурою, Тифлисъ, 21-го Апрѣля 1901 годъ.

# $1899/_{1900}$ ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

## I.

### ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

$1899/_{1900}$ ուսումնական տարուայ սկզբում, նորեկ աշակերտների քննութիւններից առաջ դպրոցում կային ընդամենը 500 աշակերտ։ Օգոստոսի 26 ին սկսուեցին վերաքննութիւնները, իսկ 30 ին՝ նորեկ աշակերտների քննութիւնները։

149 խնդրատուներից յաջող քննութիւն տուեցին և ընդունուեցին 101 հոգի կամ 67,8%, մնացածները չընդունուեցին։

Այդպիսով ուսումնական տարուայ սկզբում աշակերտների ընդհանուր թիւն էր 601։ 1900 թուականի Յունուարի 8-ին կրկին քննուեցին և ընդունուեցին 17 հոգի։ Այդ թուից տարուայ ընթացքում պակասեցին 34 հոգի։ Ուրեմն ուսումնական տարուայ վերջը դպրոցում կային ընդամենը 584 աշակերտ։

$1899/_{1900}$ ուսումնական տարում դպրոցում կային 6 հիմնական և 3 պատրաստական դասարաններ։ Ա., Բ. և Գ. պատրաստականներն ունէին մի-մի զուգընթաց բաժանմունքներ։ Հիմնական դասարաններից մի-մի զուգընթաց բաժանմունք ունէին I, II և III դասարանները, իսկ IV, V և VI դասարանները զուգընթացներ չունէին։

Այդպիսով ուրեմն $1899/_{1900}$ ուսումնական տարում դպրոցում ընդամենը 15 դասարան կար, որոնց մէջ աշա-

կերտները զետեղուած էին հետեւեալ կարգով (տարուայ վերջը)․

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. և Ա. զուգ. պատրաստ. դասարանում | | | 102 | հոգի |
| Բ. և Բ. | » | » | 93 | » |
| Գ. և Գ. | » | » | 105 | » |
| I և I | » դասարանում | | 96 | » |
| II և II | » | » | 69 | » |
| III և III | » | » | 43 | » |
| IV | | » | 30 | » |
| V | | » | 21 | » |
| VI | | » | 25 | » |
| | | Գումար | 584 | հոգի |

---

Գաղափար տալու համար, թէ ՛րտեղացիք էին մեր աշակերտները, առաջ ենք բերում հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թիֆլիս քաղաքից | 251 | հոգի | այսինքն | 42,9% |
| Թիֆլիսի նահանգից | 130 | » | » | 22,3 » |
| Երեւանի » | 55 | » | » | 9,4 » |
| Գանձակի » | 55 | » | » | 9,4 » |
| Քութայիսի » | 4 | » | » | 0,7 » |
| Բագուայ » | 2 | » | » | 0,3 » |
| Ղարսի վիճակից | 3 | » | » | 0,5 » |
| Հիւս. Կովկ., Ղրիմ, Բեսարաբ. | 17 | » | » | 2,9 » |
| Տաճկաստանից | 57 | » | » | 9,8 » |
| Պարսկաստանից | 10 | » | » | 1,7 » |

Այսպիսով ուրեմն աշակերտների մեծամասնութիւնը (65,2%) նախկին տարիների պէս Թիֆլիսից և Թիֆլիսի նահանգից էին։

---

## ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՉՈՒՄԸ

Ըստ ծնողների կոչման՝ աշակերտները բաժանւում էին հետեւեալ կարգերի.



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. Արհեստաւորների որդիք | 202 | հոգի | այսինքն | 34,6% |
| 2. Վաճառականների | » | 174 | » | » | 29,8 » |
| 3. Ստորին ծառայող. | » | 90 | » | » | 15,4 » |
| 4. Երկրագործների | » | 51 | » | » | 8,7 » |
| 5. Հոգեւորականների | » | 61 | » | » | 10,4 » |
| 6. Աստիճանաւորների | » | 3 | » | » | 0,5 » |
| 7. Ուսուցիչների | » | 3 | » | » | 0,5 » |

---

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

| Դասարաններ. | Աշակերտների թիւը. | Փոխադրւում են. | Մնում են |
|---|---|---|---|
| Ա և Ա զ. պատ. | 102 | 57 այսինք. 55,9% | 44 այսինք. 43,1% |
| Բ և Բ զ. » | 93 | 51 » 58,1 » | 39 » 41,9 » |
| Գ և Գ զ. » | 105 | 55 » 52,4 » | 47 » 44,8 » |
| I և I զ. » | 96 | 52 » 54,2 » | 39 » 40,6 » |
| II և II զ. » | 69 | 45 » 65,2 » | 24 » 34,8 » |
| III և III զ. » | 43 | 34 » 79,1 » | 9 » 20,9 » |
| IV. . . . » | 30 | 23 » 76,7 » | 7 » 23,3 » |
| V . . . . » | 21 | 16 » 76,2 » | 4 » 19,1 » |
| VI. . . . » | 25 | 25 » 100 » | |
| | 584 | 361 » 61,8% | 213 » 36,5% |

Վերաքննութիւն ունեցող աշակերտներից 10 հոգի զանազան պատճառներով չեն եկել վերաքննութեան, ուստի և չեն մտնում ոչ մնացողների և ոչ փոխադրուողների շարքը։

Այսպիսով դպրոցի 584 աշակերտներից փոխադրուել և աւարտել են 361 հոգի այսինքն 61,8%։

Մնացել են 213 » » 36,5 »

Վերաքննութեան չեն եկել 10 հոգի այսինքն 1,7%։

## ՈՐԴԵԳՐՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

20 որդեգրից՝

Փոխադրուել և աւարտել են 20 հոգի այսինքն 100%։

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Աշակերտների վարքը արտայայտւում էր հետևեալ թւերով.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | ստացել | են | վարքից | 571 | հոգի | այսինքն | 97,8% |
| 4 | » | » | » | 11 | » | » | 1,9 » |
| 3 | » | » | » | 2 | » | » | 0,3 » |

## ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

$1899/_{1900}$ ուսումնական տարում աշակերտների բացակայութիւնները աւելի են պակասել են. այն է՝

$1899/_{1900}$ ուսում. տար. ամեն մէկ աշակերտի գալիս էր 20,5 բաց թողած դաս։

---

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԴԱՍԵՐԻՑ ԴՈՒՐՍ

Անցեալ $1899/_{1900}$ ուսումնական տարում տեղի ունեցան գրականական երեկոներ, ինչպէս և նախորդ տարիները։ Գրական երեկոների նիւթ կազմել են հետևեալ խնդիրները.

1) Յոյների մտաւոր և հասարակական կեանքը՝ ըստ Գիրոյի, ընկալարել է ուսուցիչ պ. Նրուանդ Լալայեան։

2. Հացի խնդիր, ընկալարել է ուսուցիչ պ. Ստ. Մալխասեան։

3. Կաթուղիկոսական Աթոռի փոխադրութիւնը Սսից Էջմիածին, ընկալարել է ուսուցիչ պ. Մ. Ասիլեան։

4. Դոն Կարլոս Շիլլերի, ընկալարել է ուսուցիչ պ. Ս. Լիսիցեան։



5. Մար-Աբասի պատմութիւնը Մ. Խորենացու և Սեբէոսի մէջ, ընկալարել է ուսուցիչ պ. Ստ. Մալխասեան։

6. Հռովմայեցիների մասնաւոր կեանքը (նման կէտեր Հայոց մէջ), ընկալարել է ուսուցիչ պ. Ե. Լալայեան։

---

Բացի այդ, տօներին փոքր աշակերտներին ցոյց են տրուել պատկերներ մոգական լապտերով, իսկ մեծ աշակերտների համար տեղի են ունեցել աշակերտական ներկայացումներ. «Մեծապատիւ մուրացկաններ», «200,000», «Մադոյի կտակը» և «Ճարահատեալ դերասան»։

---

Տարուայ ընթացքում կատարուել են դպրոցական աշակերտական հանդէսներ.

1. Վեհափառ Կաթուղիկոսի օծման տարեդարձին։
2. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների տօնին։
3. Վարդանանց տօնին։

---

## ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախկին տարիների պէս՝ դպրոցն աշխատել է որքան հնարաւոր է օգնել չքաւոր աշակերտներին, պահելով որդեգրներ և թոշակառուներ, ձրի հաց կամ գրքեր տալով, ուսման պիտոյք, շորեր և դեղեր բաժանելով և այլն։

1. Թոշակառուների թիւը հաշուետուութեան տարում 56 էր ($189^{8}/_{9}$ ուսումնական տարում 57), որոնց վրայ ամբողջ տարուայ ընթացքում դպրոցը ծախսել է 4241 ռուբլի 30 կոպէկ ($189^{8}/_{9}$ ուսումնական տարում ծախսուել էր 4233 ռուբլի 80 կոպէկ)։

2. Նախկին տարիների պէս՝ դպրոցը ձրի ճաշ է տուել բացի որդեգրներից՝ 20 չքաւոր աշակերտի։ Դրանց անունդը դպրոցին նստել է 1120 ռուբլի ($189^{8}/_{9}$ ուսում. նական տարում 1054 ռուբլի 50 կոպէկ)։

3. Դպրոցը բոլոր աշակերտներին ձրի դեղ է տուել 310 ռուբլու։

4. Դպրոցը իւր միջոցներից ծախսել է 515 ռուբլի 44 կոպէկ, գնելով հագուստ չքաւոր աշակերտների համար կամ միանուագ օժանդակութիւն տալով նրանց ($189^{8}/_{9}$ ուսում. տարում 339 ռուբլի)։

5. Ցանուն երգեցիկ խմբի բարերար անձերից նուիրուած և աշակերտներին օժանդակութիւն է տրուած 640 ռուբլի։

Այդպիսով մեր դպրոցի չքաւոր աշակերտները անցեալ $1899/_{1900}$ ուսումնական տարում 6826 ռուբլի 74 կոպէկ օժանդակութիւն են ստացել։ Այս գումարից 6226 ռուբլի 74 կոպէկ դպրոցը ծախսել է իւր միջոցներից ($189^{8}/_{9}$ ուսումնական տարում ծախսել էր 6093 ռուբլի 16 կոպէկ) *)։

Այս հաշուի մէջ չեն մուծուած այն ծախսերը, որ դպրոցն արել է 20 որդեգրի պահպանութեան համար։

---

## ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ $1899/_{1900}$ ուսումնական տարուայ ընթացքում բժշկական հսկողութիւնը Ներսիսեան դպրոցում կատարուել է նախընթաց տարիների ձևով։ Բժիշկը այցելել է վարժարան շաբաթը 3 անգամ, զննել է հիւանդներին և օգնութիւն մատակարարել, ընդունել է հիւանդ աշակերտներին իր տանը, իսկ ծանր հիւանդութեանց միջոցին այցելել է նրանց իրանց տանը։ Հիւանդութեան դէպքերն այս տարի անցեալ տարիներից աւելի են եղել.—աւելացել են գլխաւորապէս շնչառութեան գործարանների հիւանդութիւնները, շնորհիւ երեխ ձմրան ցրտութեանը։

*) Հաշուետւութեան տարուց սկսած Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը մեր աշակերտներին այլ ևս դրամական նպաստ չէ տալիս։



Աշակերտները բժշկին դիմել են ընդամենը 817 անգամ հետևեալ հիւանդութիւնների համար.

1. Շնչառութեան գործարանների (բգի, կոկորդի, թոքերի) հիւանդութիւնների համար․ . . 275 անգամ
2. Ջերմ և մալարիա . . . 108 »
3. Մարսողական գործարանների հիւանդութիւններ . . . . 166 »
4. Արեան պակասութեան համար . 27 »
5. Ներարդային հիւանդութիւն. համար 18 »
6. Գլխացաւ. . . . . 15 »
7. Վէրքեր, մաշկի հիւանդութ. համար 54 »
8. Աչքի հիւանդութիւնների համար . 76 »
9. Ականջի հիւանդութիւնների համար. 24 »
10. Զանազան մանր հիւանդութիւններ. 54 »

Վարակիչ հիւանդութիւններից նկատուել են միայն 4 դէպք ջրածաղիկի և 6 դէպք կարմրուկ։

---

## Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Անցեալ տարուայ տեղեկագրի մէջ յայտնել էի, որ առ 1-ն Սեպտեմբերի 1899 թուականի դպրոցի գրադարանում կային ընդամենը 3690 անուն գիրք, 4369 հատորից բաղկացած, 16,082 ռուբլի 70 կոպէկ արժողութեամբ։

Սեպտեմբերի 1-ից մինչև ուսումնական տարուայ վերջն աւելացան 175 անուն գիրք, բաղկացած 194 հատորից, 560 ռուբլի 95 կոպէկ արժողութեամբ։

Աւելացնելով գրադարանի ընդհանուր հաշուին նաև այս թուերը՝ կը ստանանք՝

Առ 1 Ն Սեպտեմբերի 1900 Թ. դպրոցի գրադարանը պարունակում էր ընդամենը 3865 անուն գիրք, որոնք բաղկացած էին 4563 հատորից և արժէին 16,643 ռուբլի 65 կոպէկ։ Բացի այդ՝ գրադարանում կայ 32 կտոր ձեռագիր։

---

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են օգտուել աշակերտները գրադարանից։ Պ. գրադարանապետի հաշուից երեւում է, որ I—VI դասարանների աշակերտները (284 հոգի) ստացել են ուսումնական տարուայ ընթացքում

| | |
|---|---|
| Հայերէն . . . . | 3744 գիրք |
| Ռուսերէն . . . . | 1195 » |
| Ֆրանսերէն . . . . | 37 » |
| Ընդամենը | 4976 գիրք |

Պատրաստական դասարանների աշակերտները ստացել են մանկական ընթերցանութեան գրքեր իրանց դաստիարակների ձեռքով. դաստիարակները վերցրել են գրադարանից 311 մանկական գիրք և բաժանել իրանց աշակերտներին։

Բացի այդ՝ ուսումնական տարուայ ընթացքում I—VII դասարանների չքաւոր աշակերտներին տրուած է գրադարանից 1667 դասագիրք։

---

Դպրոցի ուսուցչանոցի համար ստացուել են հետեւեալ պարբերական հրատարակութիւնները.

«Արարատ», «Ազգագրական հանդէս», «Բազմավէպ», «Բանասէր», «Փարոս», «Լումայ», «Հանդէս ամսօրեայ», «Մշակ», «Մուրճ», «Նոր-Դար», «Տարազ», «Вѣстникъ Воспитанія», «Вѣстникъ Европы», «Новое Обозрѣніе», «Образованіе», «Педагогическій листокъ», «Россія и Азія», «Русская мысль», «С. Петербургскія Вѣдомости», «Тифлисскій листокъ» և «Кавказскій Вѣстникъ»։



Դպրոցի աշակերտների համար ստացուել են հետեւեալ պարբերական հրատարակութիւնները.

«Աղբիւր», «Воспитаніе и Обученіе», «Дѣтское чтеніе», «Міръ Божій» և «Родникъ»։

---

## 1899/1900 ՈՒՍ. Տ. ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ

| | |
|---|---|
| 1. Աբրահամեան Գրիգոր | Թիֆլիսեցի |
| 2. Անդոյեան Թէոդոս | Իլխիկապցի (Շիրակ) |
| 3. Արշակունի Գրիգոր | Ուփլիսցիխեցի (Գորի) |
| 4. Աւետիսեան Մարգար | Նոր Բայազէդցի |
| 5. Գասպարեան Յովհաննէս | Թիֆլիսեցի |
| 6. Գէորգեան Արգար | Վելիսցիխեցի |
| 7. Դուրգարեան Խաչատուր | Ալէքսանդրապօլցի |
| 8. Եսայեան Յարութիւն | Թիֆլիսեցի |
| 9. Երզնկեան Սուրէն | Թիֆլիսեցի |
| 10. Թաթուլեան Արմենակ | Ջալալ-Օղլեցի |
| 11. Խաչմանեան Թադէոս | Սեբաստացի |
| 12. Կէօնճեան Յովհաննէս | Կարնեցի |
| 13. Մովսիսեան Յակոբ | Թիֆլիսեցի |
| 14. Յակոբջանեան Մկրտիչ | Ախալցխացի |
| 15. Յովհաննիսեան Սարգիս | Թիֆլիսեցի |
| 16. Շահվերդեան Գրիգոր | Այգեհատցի (Լոռի) |
| 17. Սարգսեան Մկրտիչ | Գզնութցի |
| 18. Սիմէոնեան Վրթանէս | Ալէքսանդրապօլցի |
| 19. Վարժապետեան Կոստանդին | Բաղէշեցի |
| 20. Տէր Աստուածատրեան Մարտիր. | Օրդուբաթցի |
| 21. Տէր-Բարսեղեան Երուանդ | Թիֆլիսեցի |
| 22. Տէր-Գրիգորեան Իսահակ | Վարդաբլուր. (Լոռի) |
| 23. Տէր Գրիգորեան Ներսէս | Գանձայեցի (Ախալք.) |
| 24. Տէր Յովհաննիսեան Լեոն | Թիֆլիսեցի |
| 25. Փափազեան Արշաւիր | Թիֆլիսեցի |

---

# II

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

| Ուսուցիչների ազգանունները | Ո՞ր դպրոցում և ե՞րբ է աւարտել ուսումը | Ո՞ր թ. է ծառայում մեր դպ. | Ի՞նչ առարկայ է աւանդում |
|---|---|---|---|
| Բալասանեան Սամուէլ տեսուչ | Օդեսայի համալսարան 1889 | 1895 | Բուսաբանութիւն և բնախօսութիւն |
| Աբուլեան Գալուստ քահանայ | Ներսիսեան դպրոց 1884 | 1885 | Երգեցողութիւն |
| Ալխազեան Յարութիւն | Թիֆլ. Ա. գիմնազիա 1870 | 1887 | Ռուսաց լեզու |
| Աղանեան Գիւտ ա. քահանայ | Ներսիսեան դպրոց 1873 | 1876 | Կրօն և տօմար |
| Ասիլեան Միսաք | Գէորգեան ճեմ. 1881 | 1886 | Հ. լեզ., Հ. պատմ. և եկեղ. պատմ. |
| Բարխուդարեան Գէորգ | Դորպատի համալս. (Ա. լսարան) | 1876 | Ռուս. պատմ. և Ռուսաստ. աշխարհագ. |
| Դաղբաշեան Յարութիւն | Ներս. դպ. և Տիւբինգէնի համալս. 1893 | 1894 | Ռւս. Ս. Գրոց և Եկ. պատմութիւն |
| Եկմալեան Մակար | Պետ. կոնսեր. 1887 | 1891 | Ձայնագրութիւն |
| Զօհրաբեան Յարութիւն | Կիևի համալս. 1883 | 1886 | Մաթեմատիկա |
| Թիւսիկեան Լեւոն | Ներս. դպ. և Պետ. համալսարան 1873 | 1873 | Թուաբ., կենդ., ֆիզ. աշխ. և ֆիզիկայ |
| Լալայեան Երուանդ | Ներս. դպ. և Ժընևի համալսարան 1895 | 1897 | Ֆրանսերէն և ընդհ. պատմութ. |
| Լիսիցեան Ստեփան | Վարշ. համալս. 1889 | 1894 | Հ. և Ընդ. պ. և Ռ. լեզ. |
| Հովուեան Պօղոս | Ներս. դպ. և Գէորգ. ճեմարան 1889 | 1897 | Հայոց լեզու և Թուաբանութիւն |
| Մալխասեան Ստեփան | Գէորգ. ճեմ. և Պետր. համալս. 1889 | 1890 | Հայոց լեզու և Հայոց մատենագրութիւն |
| Մանդինեան Ամրան | Լազարեան ճեմարան 1869 | 1870 | Ընդհանուր աշխարհագրութիւն |
| Մինասեան Արշակ քահանայ | Ներս. դպ. և Ստրասբ. համալս. 1898 | 1899 | Կրօն |
| Միրաղեան Գեդէոն | Թիֆլ. Ա. գ. (VI դ.) 1883 | 1897 | Ռուսաց լեզու |
| Միրզոյեան Գաբրիէլ | Կազանի համ. (Գ. լս.) | 1882 | Ռուսաց լեզու |
| Մուրադբէգեան Աղէքսանդր | Ներսիսեան դպրոց 1892 | 1897 | Երգեցողութիւն և գծագրութիւն |
| Յարութիւնեան Իսահակ | Ներս. դպր. և Ենայի համալս. 1888 | 1888 | Հայոց լեզ., Հոգեբան. և Տրամաբանութ. |
| Շահբուդաղեան Գրիգոր | Ներսիսեան դպրոց 1879 | 1880 | Հայոց լեզու և գեղագրութիւն |
| Շամշինեան Արտեմ | Պետերբ. գեղ. ճեմ. | 1884 | Նկարչութիւն |
| Սահակեան Սահակ քահանայ | Ներս. դպր. և Լայպ. համ. 1883 | 1883 | Կրօն |
| Սպարապետ. Արշակ | Ներս. դպր. 1882 | 1882 | Գծագր. և Թուաբ. |
| Սունդուկեան Յովհաննէս | Թիֆլ. ռէալ. դպրոց 1883 | 1897 | Ռուսաց լեզու |
| Փիրումեան Տիգրան | Ներս. դպր. 1879 | 1894 | Հ. լեզու և Թուաբ. |
| Քէրէսթէճեան Մարտիրոս | Խալիպեան ուսումնարան 1859 | 1887 | Գեղագրութիւն |



*Ծանօթ. Հ. Հ. Աղանեանի և Սահակեանի, պ.պ. Բարխուդարեանի, Թիւսիկեանի և Միրզոյեանի ծառայութիւնը սկսուելով վերյիշեալ թուականներից, ընդհատուել է և զանազան ժամանակամիջոցներից յետոյ նորից սկսուել։*

---

Վերակացուի պաշտօն կատարում էին պ. պ. Գր. Տէր-Յարութիւնեան, Ա. Սպարապետեան, Պ. Հովուեան և Դ. Տէր-Դաւթեան։

---

Հաշուետուութեան տարում Արսէն քահանայ Բագրատունին թողեց ուսուցչական պաշտօնը դպրոցում։

---

Գաղափար տալու համար, թէ ինչպէս են յաճախել դասերին ուսուցիչները, առաջ եմ բերում հետևեալ ցուցակը, որից երևում է, թէ մեր դպրոցի ուսուցիչները Սեպտեմբերից սկսած՝ քանի՞ դաս պէտք է պարապէին, որքան դաս են բաց թողել և այլն։ Տեղեկութիւններն առաջ են բերուած ամբողջ տարուայ նկատմամբ. դասեր բաց թողնելու պատճառներն եղել են՝ հիւանդութիւնը, ընտանեկան գործերը, դատարան կանչուելն և այլն։

| ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ | Որքան դաս պէտք է պարապէր | Ուսւ. պարապ. դ. թ. | Չպարապած դասերի թիւը | Ընդամենը որքան դաս է պարապել | Չպարապած դաս. թ. արտայայտուած % | Քանի՛ անգամ է ուշ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 Բալաղեան Սամուէլ տեսուչ. | 165 | 2 | — | 167 | — | — |
| 2 Աբուլեան Գալուստ քահ. . . | 229 | — | 16 | 213 | 6.9% | 1 |
| 3 Ալխազեանց Յարութիւն . . | 457 | 1 | 26 | 432 | 5.5 „ | — |
| 4 Աղանեան Գիւտ ա. քահ. . | 328 | 16 | 51 | 293 | 10.7 „ | 17 |
| 5 Ասիլեան Մխաք . . . . | 610 | — | 2 | 608 | 0.3 „ | — |
| 6 Բարխուդարեան Գէորգ . . | 279 | — | 9 | 270 | 3.3 „ | 3 |
| 7 Դաղբաշեան Յարութիւն . | 447 | — | 19 | 428 | 4.3 „ | 8 |
| 8 Եկմալեան Մակար , . . | 608 | — | 27 | 581 | 4.4 „ | 3 |
| 9 Զոհրաբեան Յարութիւն . . | 684 | — | 1 | 683 | 0.2 „ | — |
| 10 Թիւսիկեան Լեւոն. . . . | 526 | 18 | 141 | 403 | 23.4 „ | 2 |
| 11 Լալայեան Երուանդ . . , | 586 | — | 18 | 568 | 3.1 „ | 13 |
| 12 Լիսիցեան Ստեփան . . . | 549 | 9 | 17 | 541 | 1.5 „ | 7 |
| 13 Հովուեան Պօղոս . . . . | 289 | 1 | 1 | 289 | — | 3 |
| 14 Մալխասեան Ստեփան . . | 600 | — | 37 | 563 | 6.2 „ | 1 |
| 15 Մանդինեան Ամիրան . . . | 461 | 1 | 36 | 426 | 7.6 „ | 32 |
| 16 Մինասեան Արշակ քահանայ. | 260 | 5 | 6 | 259 | 0,3 „ | 8 |
| 17 Միրաղեան Գեդէոն . . . | 517 | — | 8 | 509 | 1.6 „ | 14 |
| 18 Միրզոյեան Գաբրիէլ . . . | 518 | 5 | 193 | 330 | 36.6 „ | 1 |
| 19 Մուրադբէգեան Աղէքսանդր. | 174 | 1 | 4 | 171 | 1.7 „ | 2 |
| 20 Յարութինեան Իսահակ . . | 388 | 2 | 25 | 365 | 5.9 „ | 14 |
| 21 Շանթուղաղեան Գրիգոր. . | 571 | — | 13 | 558 | 2.3 „ | 14 |
| 22 Շամշինեան Արտեմ . . . | 326 | — | 79 | 247 | 24.5 „ | — |
| 23 Սահակեան Սահակ քահանայ. | 450 | 2 | 55 | 397 | 11.8 „ | 1 |
| 24 Սունդուկեան Յովհաննէս. . | 284 | — | 36 | 248 | 12.7 „ | 1 |
| 25 Սպարապետեան Արշակ . . | 281 | 2 | 32 | 251 | 10.7 „ | 1 |
| 26 Փիրումեան Տիգրան . . . | 571 | — | — | 571 | — | — |
| 27 Քէրէսթէճեան Մարտիրոս . | 445 | — | 39 | 406 | 8.8 „ | — |
| Ընդամենը . . | 11603 | 65 | 891 | 10777 | 7.1% | 146 |



Այս աղիւսակից երեւում է, որ բոլոր ուսուցիչները տարւայ ընթացքում պէտք է պարապէին ընդամենը 11603 դաս, իսկ պարապել են ընդամենը 10777 դաս, այդպիսով ամբողջ տարւայ ընթացքում 826 դաս մնացել են ազատ, որը կազմում է դասերի ընդհանուր թուի 7,1%։ Այս տոկոսը աւելի փոքր է քան անցեալ տարւայ չ՚պարապած դասերի % (անցեալ 189$^8/_9$ ուս. թ. չպարապած դասերի %-ն էր 7,6):

---

Անցեալ 1899/$_{1900}$ ուսումնական տարում պարապմունքները սկսուել են Սեպտեմբերի 6-ից և վերջացել Մայիսի 17-ին։

---

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Անցեալ 1899/$_{1900}$ ուսումնական տարւայ ընթացքում Մանկավարժական խորհուրդն ունեցել է 20 նիստ։ Նիստերին միջին թուով ներկայ են եղել 20,4։ Բոլոր նիստերին ներկայ են եղել պ. պ. Բալաղեան, Ալխազեան, Ասիլեան, Զոհրաբեան, Լալայեան, Հովուեան և Մալխասեան։

Բացակայ են եղել նիստերին.

2 անգամ հ. Սահակեան։
3 » հ. Աբուլեան և պ.պ. Լիսիցեան, Մանդինեան և Մուրադբէգեան։
4 » պ.պ. Բարխուդարեան, Թիւսիկեան և Շանթուղաղեան։
5 » հ. Մինասեան և պ.պ. Միրաղեան, Յարութինեան, Սպարապետեան և Փիրումեան։
6 » հ. Աղանեան։
7 » պ. Սունդուկեան։
11 » պ. Շամշինեան։

12 » պ.պ. Դաղբաշեան և Միրզոյեան:
14 » պ. Նկմալեան:
19 » պ. Քէրէսթէճեան:

Մանկավարժական ժողովների խորհրդածութեան նիւթ եղել են հետեւեալ խնդիրները.

1. Նորեկ աշակերտների ընդունելութիւնը:
2. Վերաքննութեան հետեւանքները:
3. Ընտրութիւն որդեգրների, թոշակառուների և ճաշողների:
4. Վարքի վերաբերեալ խնդիրներ:
5. Լրագրների և ամսագրների ցուցակ կազմելը:
6. Էֆէնդեանի սանի ընտրութիւնը:
7. Նորեկ աշակերտներին Մայիսին քննելու հարցը*):
8. Խիտրեանի սաների ընտրութիւնը:
9. Մրցանակի արժանի աշակերտների ընտրութիւնը:
10. Դպրոցի 75-ամեայ յոբելեանի ծրագիրը (մասնաժողովի կազմած):
11. Վերջնական քննութիւնների մասին խորհրդածութիւններ:
12. Աշակերտների առաջադիմութեան արդիւնքը և այլն:

*Տեսուչ՝ Սամուէլ Բալաղեանց*

*) Որոշուեց այսուհետեւ նորեկներին քննել ուսարտական առարկաներից մեր աշակերտների հետ Մայիսին, իսկ մնացած առարկաներից՝ Սեպտեմբերին:

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

*Ներսիսեան Հայոց Հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան կազմը.*

Նախագահ Հոգաբարձութեան Նորին Բարձր Սրբազնութիւն վիճակաւոր Առաջնորդ թեմին Հայոց Վրաստանի և Իմէրէթի Գերապատիւ *Գէորգ Արք-Եպիսկոպոս Սուրէնեանց:*

*Հոգաբարձուք դպրոցից-15 Նոյեմբերի 1900 ամի:*

1004
13913

1. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանց:
2. Յովհաննէս Ալիխանեանց:
3. Յովսէփ Ամիրխանեանց:
4. Իսահակ Բուզդանեանց:
5. Նազարէթ Տիգրանեանց:
6. Աղէքսանդր Քալանթար:
7. Կարապետ Քոչարեանց:

*Հոգաբարձուք, 15-ից Նոյեմբերի 1900 ամի:*

1. Ղեւոնդ ա. քահ. Խարազեանց:
2. Գիւտ ա. քահ. Աղանեանց:
3. Աղէքսանդր Մէլիք-Ազարեանց:
4. Յովհաննէս Ալիխանեանց:
5. Յովսէփ Ամիրխանեանց:
6. Իշխան Արսէն Բէհբութեանց:
7. Յովսէփ Տիգրանեանց:
8. Բժ. Կարապետ Ստեփանեանց:

Գործավար խորհրդի Հոգաբարձութեան Ռուբէն Մէլիք-Ադամեանց:

## *Ներսիսեան Հայոց Հոգեւոր դպրոցի տնտեսական հաշիւը 1900 թ.*

### ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐ

Տարէկան արդիւնք
Ռ. Կ.

1. Հին դպրոցական տունը, որ կառուցել է ի Տէր հանգուցեալ Ներսէս Ե կաթուղիկոսը 14021 —

2. Հին դպրոցի հանդէպ գտնուած 21 կրպակները, որ սեփականացրած է դպրոցին նոյն Ներսէս կաթուղիկոսից . . . 8900 —

3. 21 կրպակներ որ գտնւում են դպրոցապատկան հրապարակի վերայ . . . 4880 —

4. Դատարկ գետինը. որ յատկացրել է դպրոցին հանգուցեալ Մատթէոս կաթուղիկոսը. 732 —

5. Այժմեան տունը դպրոցի, որ գնել է Հոգաբարձութիւնը 1856 թ. (Ներքնայարկը) . 1248 —

6. Կալուած, որ ընծայել է հանգուցեալ Աւետիք Փիրոյեանցը (Ռուսաց բազարում) . 15827 —

7. Կրպակ ընծայած Գրիգոր Ճերգիլեանից 200 —

8. » » Օթար Ճաղբաթեանից 200 —

9. Կալուած, որ ընծայել է Յարութիւն Օքրոյեանցը Սաղում. . . . . 1586 —

10. Տուն, որ ընծայել է հանգուցեալ իշխան Արղութեան Երկայնաբազուկը . : 2100 —

11. Տուն, որ գնել է Հոգաբարձութիւնը Ռօտինեանից. . . . . . 130 —

12. Տուն, որ ընծայել է տիկին Եկատերինէ Նադիրեանը . . . . . 240 —

13. Կալուած, որ ընծայել է հանգուցեալ տիկին Թագուհի Փանոսեանցը . . . 1470 —

14. Կալուած, որ գնել է Հոգաբարձութիւնը Յ. Փարաջանեանից, կից դատարկ գետնին 440 —

15. Այգի, որ ընծայել է վրաց իշխան Օթար Ամիլախվարին Սողանլուխում . . 160 —



16. Այգի, որ ընծայել է Ստեփան Ղամբարեանը Թելէթում. . . . . 10 —

52144 —

Թիֆլիսի թեմի մոմավաճառոցինը, ըստ հրամանի Երջանկայիշատակ Ներսէս Ե Կաթուղիկոսի . . . . . 7600 —

Ընդամենն . . 59744 —

Ներսիսեան դպրոցն ունի և բարերարներից կտակներով ու որոշ պայմաններով նուիրուած գումարներ. այդ գումարները տոկոսաբեր թղթերով պահպանւում են Թիֆլիսի բանկային հիմնարկութիւններում և են հետեւեալները.

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1. | Յովսէփ Էֆէնդեանց | 64000 | — |
| 2. | Եկատերինէ Ռօտինեանց | 700 | — |
| 3. | Մարիամ Դաւթեան Պապովեանց | 2000 | — |
| 4. | Վարդան Եղիազարեանց | 100 | — |
| 5. | Եսայի Տէր-Դաւթեանց | 1900 | — |
| 6. | Սողոմոնի Վարդանեանց | 4400 | — |
| 7. | Հայ հասարակութեան ի յիշատակ Մակար կաթուղիկոսի | 3600 | — |
| 8. | Մինաս Սամուէլեանց | 3630 | — |
| 9. | Վարվառէ Երուսալիմսկւոյ | 5600 | — |
| 10. | Օթար Ճաղբաթեանց | 200 | — |
| 11. | Եսայի Արք-Եպ. Աստուածատրեանց | 9419 | 53 |
| 12. | Գրիգոր Ճիօյեանց | 5400 | — |
| 13. | Մայիի Փուլինեանց | 700 | — |
| 14. | Մարիամ Սերեդենկօ | 800 | — |
| 15. | Ճաքար Նարալեան | 1023 | — |
| 16. | Յովհաննէս Անանեանց յանուն Յարութիւն վարդապետի Ալամդարեանց | 5217 | 20 |
| 17. | Նունէ Ղամբարեան | 3112 | 40 |
| 18 | Աղէքսանդր Թայիրեանց | 1659 | 20 |
| 19. | Գէորգ Փրիդոնեանց | 5240 | — |
| 20. | Յարութիւն Գրիգորեանց | 6457 | 20 |

21. Ցանուն Յովհաննէս ա. ք. Սարգսեանց 1222 —
22. Գրիգոր Թումայեանց . . . 5107 —
23. Ցանուն երգեցիկ խմբի . . 100 —
24. Եկատերինէ Մելիք - Շահնազարեանց Դէ-Շապուր . . . . . . 2000 —
25. Ստեփան Գէորգեան . . . 5000 —
26. Նունէ Նւանդուլեանց . . . 10200 —
27. Գրիգոր Մեղուբինեանց . . . 6000 —
28. Ստեփան Խիթրով . . . 19600 —
29. Սեփականութիւն ուսուցչական փոխատու խնայողական գանձարանի . . 400 —
30. Նատալիա Սաֆարեանց յանուն հանգուցեալ ամուսնոյ Միքայէլի Սաֆարեան . 3000 —

177787 53

*Դպրոցիս ծառայողաց Թոշակարկղ*

1. Նուիրաբերութիւն Նատալիայի Սաֆարեանց . . . . . . 1000 —
3. Հոգաբարձութիւնը յատկացրել է իր խնայողութիւններից. . . . . 3000 —

4000 —

---

*Դպրոցական շէնք կառուցանելու համար եղել են ընծայաբերութիւններ.*

1. Յարութիւն Ծովեանեանից . . 83 —
2. Թիֆլիզի 2 կարգի վաճառական Գէորգ Դաւթեանից . . . . . . 100 —
3. Նախկին սան դպրոցիս Մելիքսեդեկ Արք-Եպիսկոպոսից . . . . . 160 —
4. Թիֆլիզ քաղաքացի Գրիգոր Սերեբրակեանից. . . . . . . 330 —



5. Հանգուցեալ Դէյստ. Ստ. Սովետ. Միքայէլ Ալիխանեանից . . . . 1000 —
6. Աստիճանաւոր Գէորգ Տէր-Դաւթեանից . . . . . . . 1000 —
7. Ըստ կտակի Թիֆլիզ քաղաքացի Ալեքսի Ջանջուղազեանից . . . . 1500 —
8. Թիֆլիզ քաղաքացի Աւետիք Տէր Աբրահամեանից . . . . . 300 —
9. Հանգուցեալ Գրիգոր Թամամշեանի ժառանգներից . . . . . 400 —
10. Հանգուցեալ Գրիգոր Ջանջուղազեանից . . . . . . . 1000 —
11. Դպրոցը առել է իւր խնայողութիւններից . . . . . . 26819 75

32692 75

Այդ գումարները $^0/_0{}^0/_0$—թղթեր են և պահպանւում են Թիֆլիսի բանկային հիմնարկութիւններում։

## ՀԱՇԻՒ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՒ ԾԱԽՔԵՐԻ ԴՊՐՈՑԻ
## 1900 Թ.

### I ՄՈՒՏՔ

1. Անշարժ կալուածքներից . . . 47975 58
2. Մոմավաճառութիւնից . . . 6391 65
3. Անակընկալ մուտք . . . . 1305 86
4. Աշակերտներից գին՝ դասական գրքերի . 127 35
5. Գումարների $^0/_0{}^0/_0$-երը . . . 9231 09

Ընդամենն . 65031 53
Ապառիկ . . . . . 4817 46

69848 99

## II ԾԱԽՔ

| | | |
|---|---|---|
| 1. Ռոճիկ և կենսաթոշակ ուսուցչաց և ծառայողաց | 37399 | 34 |
| 2. Գրադարան, դասական գրքեր և ֆիզիքական կաբինետ | 610 | 91 |
| 3. Կահ-կարասիք և վերանորոգութիւն նոցա. | 537 | 18 |
| 4. Սնունդ որդեգրաց և չքաւոր աշակերտաց | 2839 | 33 |
| 5. Հանդերձեղէն և կօշիկ որդեգրաց. | 908 | 9 |
| 6. Թոշակագրամ չքաւոր աշակերտաց | 4263 | 28 |
| 7. Բաղանիք, դեղօրայք և զուարճութիւն աշակերտաց. | 315 | 16 |
| 8. Վառելանաւթ, քարածուխ և վառելափայտ | 1314 | 39 |
| 9. Ջուր | 115 | 76 |
| 10. Դիւանական և դասական պիտոյք, լրագիրք և ամսագիրք | 1148 | 67 |
| 11. Ապահովութիւն կալուածոց հրդեհից, հարկ Արքունի և տնահարկ կալուածոց. | 5381 | 12 |
| 12. Վերանորոգութիւն անշարժ կալուածոց և մաքրութիւն փողոցաց | 3121 | 87 |
| 13. Հոգեհանգիստ բարերարների | 635 | 44 |
| 14. Դպրոցիս 75-ամեայ յոբելեանը կատարելու համար | 1550 | 6 |
| 15. Վարձ տան (առանձին) որտեղ է որդեգրաց ննջարանը | 427 | 50 |
| 16. Տուած է դպրոցիս ծառայողաց թոշակարկղին | 706 | 42 |
| 17. Անակնկալ ծախք (օժանդակութիւն երկարամեայ ծառայողաց, հագուստ չքաւոր աշակերտաց, մանր ծախք) | 2652 | 01 |
| 18. Համաձայն հանգուցեալ Յովսէփ Էֆէնդեանցի և միւս բարերարների կտակաց պահպանութեան սաների, յօժիտ չքաւոր օրիորդաց և այլն | 487 | 11 |
| 19. Հարկ Արքունի գումարների | 754 | — |
| 20. Դպրոցիս պատմութիւնը գրելու | 669 | 33 |
| 21. Միանուագ օժանդակութիւն չքաւոր աշակերտներին | 250 | — |
| Ընդամենն. | 66086 | 97*) |



## ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

| | |
|---|---|
| 1. Թղթեր եկեալ | 808 |
| 2. » ելեալ | 995 |
| 3. Կազմած գործեր. | 53 |
| 4. » օրագրներ | 36 |
| 5. Հոգաբարձական ժողովներ | 36 |

Գործավար՝ Ռուբէն Մելիք-Ադամեանց

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Б...
7/XI 1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

*) Նախահաշուով 1901 թ. նշանակուած է մուտք 69917 — ծախք 69767 67

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

20996

201[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0054834